— Որպէս եղ ու մեղր, այնքան քաղցր են:

— Դա նոյն փաշա՞ն է, որ մի անգամ հայոց եկեղեցու սեղանի վրայ բոշայ տղաներ էր պար ածել տոել եւ գինի էր խմել:

— Հէնց նոյնը: Նա էլ հէնց փաշայից սովորեցաւ բոշաների պար ածելը:

Բոլոր այս խօսքերը, ինչ որ ասում էր տէրտէրը, թէեւ ինձ շատ հասկանալի չէին, բայց որպէս նկատում էի, խայթոցի նման ծակում էին Ասլանի սիրտը: Նրա պարզ դէմքը հետզհետէ մթնում էր, եւ նրա ձայնը զայրացած եղանակ էր ստանում:

— Ինձ բոլորովին անհաւատալի է թւում, — ասաց նա, — Վանայ ժողովուրդը իր նահապետական պարզամտութեան մէջ չէր կարող համբերել այս աստիճան չարագործութիւնների: Այդ նշանաւոր մարդու վատ օրինակը աւելի շատ գայթակղեցնում է, աւելի շատ վիրաւորում է միամիտ ժողովրդի զգացմունքը:

— «Նիզակը գողացողը առաջ նրա թաքցնելու տեղը կգտնիէ, — պատասխանեց տէրտէրը: — Նա շատ ճարպիկ է իրան արդարացնելու խօսքեր գտնելու մէջ: Երբ նրան ասում են, թէ դու ի՞նչ գործ ունես փաշայի կամ այս եւ այն աւազակ քրդի եւ բոշայ պար եկողների հետ: — Նա միշտ Պօղոսի, իր անուանակցի, խօսքերը վկայութիւն է բերում, թէ «պէտք է հրէայի հետ հրէայ լինել եւ հեթանոսի հետ հեթանոս»: Ասում է, թէ ես ժողովրդի օգտի համար եմ նրանց հետ բարեկամութիւն պահպանում, եւ մահմեդականութեան սովորութիւններին հետեւում, որ նրանց հաճոյանամ եւ իմ ազգի շահերը պահպանեմ:

— Չարագո՛րծ, — ասաց Ասլանը: — Վասակները միշտ այսպէս էին իրանց արդարացնում:

Թէեւ Ասլանը առաջուց ասում էր, շատ քաղցած եմ, բայց համարեա ոչինչ չկերաւ: Տէրտէրն էլ նկատեց այս եւ հարցրուց.

— Ինչո՞ւ չես ուտում:

— Ախորժակս աւերոեցաւ, — ասաց նա:

— Ա՛ռ, խմիր, թող սիրտդ հովանայ, դարդերդ կը մոռանաս:

Ասլանը ընդունեց գինու ահագին գաւաթը, միանգամով խմեց:

— Բայց քո ախորժակը տեղն է, — դարձաւ դէպի ինձ տէրտէրը. — որովհետեւ դու չես մտածում այն բանի վրայ, թէ Վանում ինչե՛ր են կատարւում:

— Ես դրա համար էլ գնում եմ այնտեղ, որ տեսնեմ, ինչպիսի քաղաք է: